Արսեն Հովհաննիսյան[1]

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Իրավաբանական գրականության մեջ «իրավաբանական պատասխանատվություն» հասկացությունը չունի միանշանակ բնորոշում: Ընդհանուր առմամբ, իրավաբանական պատասխանատվությունը հանդիսանում է հասարակական պատասխանատվության տեսակ, ինչպես քաղաքական, բարոյական, ազգային և պատասխանատվության այլ տեսակները[2]: Իրավաբանական գրականության մեջ իրավաբանական պատասխանատվությունը մի դեպքում բնորոշվում է որպես պետական հարկադրանքի միջոց, որը հիմնվում է իրավախախտի վարքագծի նկատմամբ իրավաբանական և հասարակական պարսավանքով և արտահայտվում է վերջինիս համար բացասական հետևանքերով՝ անձնական և գույքային իրավունքների սահմանափակմամբ: Մեկ այլ բնորոշման համաձայն իրավաբանական պատասխանատվությունը սահմանվում է որպես իրավախախտում կատարած անձանց նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների կիրառում սահմանված ընթացակարգով[3]: Ամենաընդհանուր բնորոշմամբ իրավաբանական պատասխանատվությունը իրավախախտման դեպքում սանկցիայի կիրառությունն է[4]: Այսինքն, իրավաբանական պատասխանատվությունը հանգում է որոշակի

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Վ Ավետիսյան:

[2] Տե՛ս Общая теория права, **Ю. А. Дмитриев, |И. Ф. Казьмин|, В. В. Лазарев** и др., Под общ. ред. А. С. Пиголкина. – 2-е изд., испр. и доп. – М.: Изд-во МГТУ, 1996, էջ 332:

[3] Տե՛ս **М. Н. Марченко**, Теория государства и права, Учебник, 2-е издание, Изд-во "Проспект", 2004, էջ 633:

[4] Տե՛ս **Բաբսեղյան Տ. Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս (երրորդ հրատարակություն), Երևանի պետ. համալս., - Եր., Երևանի համալս. հրատ., 2009, էջ 501:

հարկադրանքի (այդ թվում պետական) կիրառմանը: Իրավաբանական պատասխանատվությունը պատճառահետևանքային կապի համատեքստում դիտարկելիս այն կարելի է բնորոշել որպես իրավախախտման հետևանք: Իրավաբանական պատասխանատվության ձևերից են համարվում, ի թիվս այլոց, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը և վարչական պատասխանատվությունը[1]:

Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը հարկադրական ներգործության ձև է, քաղաքացիաիրավական հատուկ սանկցիաների կիրառություն, որն իրավախախտի համար անշահավետ գույքային հետևանքներ առաջացնելուց բացի նրան հարկադրում է կատարել մինչև իրավախախտումը գոյություն չունեցող լրացուցիչ պարտավորություն[2]:

Տեսության մեջ առանձնացնում են քաղաքացիաիրավական պատասխանատվության մի շարք տեսակներ: Մասնավորապես, ըստ պատասխանատվության առաջացման հիմքի տարբերում են պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվություն: Ըստ իրավախախտում թույլ տված պարտապանների միջև պատասխանատվությունը բաշխելու եղանակների՝ տարբերվում են բաժնային, համապարտ և լրացուցիչ պատասխանատվության տեսակները:

Վարչական պատասխանատվությունը բնութագրվում է որպես վնասի պատճառողի նկատմամբ պետության վերաբերմունք, վարչաիրավական սանկցիաներով պահպանվող իրավական նորմի խախտմանը պետական գնահատական: Այդ համատեքստում վարչական պատասխանատվությունը դիտարկվում է որպես անձի պարտականություն կրելու իրավական նորմերով սահմանված սահմանափակումներ այդ իրավանորմերով սահմանված կանոնները խախտելու համար: Այլ կերպ ասած վարչական պատասխանատվությունը կոչված է վերականգնելու իրավախախտման հետևանքով պատճառված վնասը և իրավախախտի համար հանդես է գալիս որպես պատիժ[3]:

---

[1] Տե՛ս **А. П. Сергеев, Ю. К. Толстой**, Гражданское право. Том 1. Учебник: в 3 т. — 6-е изд., перераб. и доп, Изд-во "Проспект", 2005, էջ 631:

[2] Տե՛ս **Բարսեղյան Տ. Ч.**, նշված աշխատությունը, էջ 502:

[3] Տե՛ս **А. И. Стаханов, Н. В. Румянцев**, Административная отвественность, М., Изд.-во "ЮНИТИ-ДАНА", Закон и право, 2012, էջ 6:

Քաղաքացիաիրավական և վարչական պատասխանատվությունը առաջանում է որոշակի պայմանների առկայության դեպքում, որոնք պատասխանատվության երկու տեսակների համար կարելի է առանձնացնել ընդհանուր ձևով, քանի որ դրանք հիմնականում նույնանում են, իհարկե հաշվի առնելով նաև քաղաքացիաիրավական և վարչական հարաբերությունների առանձնահատկությունները: Պատասխանատվության պայմաններն են հակաօրինական կամ հակաիրավական վարքագիծը, վտանգավոր հետևանքները (եթե դրանց առաջանալը պատասխանատվություն կիրառելու պարտադիր պայման է հանդիսանում), պատճառական կապը արարքի և հետևանքների միջև և իրավախախտի մեղքը: Միայն այս պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր կիրառել պատասխանատվություն:

Պատասխանատվության վերը նշված տեսակներն ունեն նաև իրենց սուբյեկտը, այսինքն՝ պատասխանատվությունը յուրաքանչյուր դեպքում կիրառվում է կոնկրետ անձի նկատմամբ նրա կատարած կոնկրետ արարքի համար: Հետևապես նաև պատասխանատվությունը կրում է անձնական բնույթ՝ յուրաքանչյուրը պատասխան է տալիս իր հակաիրավական վարքագծի համար:

Պատասխանատվության սուբյեկտը այն անձն է (ֆիզիկական և իրավաբանական), ով չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել պարտավորությունները կամ վնաս է պատճառել, կամ էլ խախտել է իրավական նորմերով սահմանված վարքագծի պարտադիր կանոնները:

Քանի որ պատասխանատվությունը ենթադրում է հստակ իդենտիֆիկացված հասցեատեր և կապված է անձնական և գույքային իրավունքների որոշակի սահմանափակումների հետ, հետևաբար առաջ է գալիս իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում այդ պատասխանատվության սուբյեկտին որոշելու, պատասխանատվության ենթարկվելու ռիսկը վերակազմակերպման արդյունքում այլ սուբյեկտի փոխանցվելու հնարավորության պարզման անհրաժեշտությունը:

Նշված հարցերի պարզման նպատակով նախ անհրաժեշտ է անդրադառնալ «վերակազմակերպում» իրավական կատեգորիայի օրենսդրական բանաձևմանը, դրա ձևերին և վերակազմակերպման դեպքում իրավահաջորդության հիմնախնդիրներին:

Վերակազմակերպումը հանդիսանում է ինքնուրույն իրավաբանական երևույթ, որին հատուկ են իրավաբանական անձի գործունեության դադարման և ստեղծման գործընթացները: Ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը[1], այնպես էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը[2] և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը[3] չեն բանաձևում վերակազմակերպման հասկացությունը, այլ միայն սահմանում են վերակազմակերպման ձևերը՝ միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում[4]: Տեսական գրականության մեջ տրվել են վերակազմակերպման տարբեր բանաձևումներ: Մասնավորապես, հեղինակների մի խումբ գտնում է, որ վերակազմակերպումը հանդիսանում է գործարք, մյուսները կարծում են, որ այն իրավական փաստերի համախումբ է, որոնց մի մասը հանդիսանում են գործարքներ և այլն:

Այս հարցում համաձայն ենք պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանի արտահայտած այն կարծիքի հետ, որ վերակազմակերպումը հանդիսանում է գոյություն ունեցող իրավաբանական անձի նյութական հենքի վրա իրավունքի նոր սուբյեկտի կամ սուբյեկտների ստեղծում՝ գոյություն ունեցող իրավունքի սուբյեկտի գոյության դադարմամբ կամ նյութական հենքի ընդլայնմամբ կամ նվազմամբ[5]:

Վերակազմակերպման ձևից կախված իրավահաջորդությունը ձևակերպվում է փոխանցման ակտով (միացում, միաձուլում, վերակազմավորում) կամ բաժանիչ հաշվեկշռով (բաժանում, առանձնացում)[6]:

---

[1] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 05.05.1998 թ., ՀՕ- 239: ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[2] Տե՛ս ՀՀ օրենքը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»՝ ընդունված 25.09.2011 թ., ՀՕ-252: ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

[3] Տե՛ս ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին»՝ ընդունված 25.09.2011 թ., ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

[4] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), մենագրություն, ԵՊՀ հրատ., Եր, 2013, էջ 114:

[5] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, նշված աշխատությունը, էջ 114:

[6] Տե՛ս **А. П. Сергеев, Ю. К. Толстой**, նշված աշխատությունը, էջ 138:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը պետք է դրույթներ պարունակեն վերակազմակերպված իրավաբանական անձի գույքի ու պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին՝ ներառյալ վիճարկվող պարտավորությունները:

Այսինքն, փոխանցման ակտով (բաժանիչ հաշվեկշռով) պետք է սահմանվեն իրավահաջորդ իրավաբանական անձանց անցնող վերակազմակերպման պահի դրությամբ առկա գույքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև վերակազմակերպման պահի դրությամբ առկա պարտավորությունների (այդ թվում՝ վիճարկվող) մասին տեղեկություններ: Այլ կերպ ասած վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդությամբ անցնում են այն գույքը կամ պարտավորությունները, որոնք տվյալ պահին հայտնի են, այդ թվում նրանք, որոնք վիճարկվում են:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները: Այսինքն, իրավահաջորդը կկրի վնասի հատուցման պարտականություն միայն այն դեպքում, երբ իրավանախորդն արդեն իսկ ճանաչվել է պատասխանատու պատճառված վնասի համար:

Նմանապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի[1] 16-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության վերակազմավորման (վերակառուցման) դեպքում չկատարված հարկային պարտավորությունը կրում է նրանց իրավահաջորդը (իրավահաջորդները): Նույն հոդվածի համաձայն հարկային պարտավորությունը ներառում է նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտե-

[1] Տե՛ս ՀՀ օրենքը «Հարկերի մասին»՝ ընդունված 14.04.1997, ՀՀՊՏ 1997.05.20/11:

բը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Նման ձևակերպումը թույլ է տալիս ենթադրելու, որ եթե անգամ հարկային պարատավորության վերաբերյալ համապատասխան նշում չկա փոխանցման ակտում (բաժանիչ հաշվեկշռում), ապա միևնույնն է այդ պարտավորությունն անցնում է իրավահաջորդ իրավաբանական անձին, քանի որ դա սահմանված է օրենքով:

Ընդհանրապես, ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանը, փոխանցման ակտը և բաժանիչ հաշվեկշիռը լիարժեք կերպով չեն ծառայում այն նպատակին, որի ապահովման համար ստեղծվել են այդ հասկացությունները: Մասնավորապես, փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը հաստատում են միայն դրանց կազմման օրվա դրությամբ գոյություն ունեցող գույքի կամ պարտավորությունների իրավահաջորդության մասին տեղեկություններ: Նշված իրավակարգավորումը թույլ չի տալիս պարզելու այդ փաստաթղթերի հաստատումից հետո գույքի կամ պարտավորությունների փոփոխության փաստը բացահայտելու հնարավորությունը: Բացի այդ, օրենսդիրը հստակ չի կարգավորում այն դեպքերը, երբ փոխանցման ակտով պարտավորությունների վերաբերյալ չեն նշվում ամբողջական տեղեկություններ: Նման դեպքերի համար առաջարկվում է սահմանել իրավահաջորդների համար համապարտ պատասխանատվություն[1]:

Պատասխանատվության իրավահաջորդության խնդիրը պետք է քննարկել երկու տեսանկյունից: Առաջին հերթին քննարկենք այն դեպքը, երբ իրավաբանական անձը կատարել է իրավախախտում կամ թույլ է տվել պարտավորության կատարման կետանց կամ վնաս է պատճառել, որը վարչական իրավախախտման դեպքում հաստատվել է վարչական ակտով (ներառյալ այն դեպքերը, երբ իրավաբանական անձի նկատմամբ կա ենթադրյալ վարչական իրավախախտման կապակցությամբ հարուցված վարչական վարույթ և իրավաբանական անձը վերակազմակերպվում է), իսկ պարտավորության կետանցի դեպքում այդ մասին հայտնի է դարձել պարտապանին և պարտատիրոջը (նույնը նաև վնաս պատճառելու դեպքերում):

---

[1] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, նշված աշխատությունը, էջ 126-127:

Իրավահաջորդության օրենսդրական ներկա կարգավորումը թույլ է տալիս լուծելու այս խնդիրը: Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է, իրավահաջորդության պահին հայտնի իրավանախորդի գույքը կամ պարտավորությունները (այդ թվում՝ վիճարկվող)[1] և իրավունքները անցնում են իրավահաջորդին (այս պարագայում հիմք ընդունենք նաև տեսության մեջ արտահայտված իրավացի տեսակետն առ այն, որ նման պարտավորություններն անցնում են իրավահաջորդին անկախ փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում դրանց մասին նշելու)[2]:

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ իրավաբանական անձը կատարում է վարչական իրավախախտում կամ կատարում է քաղաքացիաիրավական զանցանք (օրինակ՝ կյանքին կամ առողջությանը վնասի պատճառում) և մինչև այդ իրավախախտման բացահայտումը կամ դրա բացահայտման նպատակով վարչական վարույթ հարուցելը (ըստ էության մինչև իրավախախտման փաստի կամ հնարավոր իրավախախտման մասին հայտնի դառնալը) վերակազմակերպվում է: Արդյոք նման դեպքերում հնարավոր է պատասխանատվության փոխանցումը իրավահաջորդությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ գործող օրենսդրությամբ կարգավորվում են միայն իրավահաջորդության պահին առկա իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդությամբ փոխանցվելու հետ կապված հարաբերությունները:

Վերը նշված խնդրին փորձ է արվել լուծում տալ Վարչական իրավախախտումների մասին նոր օրենսգրքի նախագծով: Մասնավորապես, նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում վարչական պատասխանատվության ենթակա է իրավահաջորդ իրավաբանական անձը, իսկ իրավաբանական անձի բաժանման դեպքում՝ այն իրավաբանական անձը, որին, ըստ բաժանիչ հաշվեկշռի, անցել է գույքի

---

[1] Վերակազմակերպվող իրավաբանական անձի նկատմամբ ենթադրյալ իրավախախտման կապակցությամբ հարուցված վարչական վարույթը դիտարկենք որպես վիճարկով հնարարավոր պարտավորություն, որի հաստատման դեպքում իրավահաջորդը կկրի համապատասխան բացասական ռիսկերը՝ պատասխանատվության միջոցների տեսքով:

[2] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, նշված աշխատությունը, էջ 127:

առավել մեծ մասը, իսկ գույքի հավասարաչափ բաժանման դեպքում՝ իրավահաջորդ բոլոր իրավաբանական անձինք:

Նախագծով տրված կարգավորումը ևս ամբողջությամբ չի ապահովում բարձրացված խնդրի լուծումը:

Նախ վերը նշված դրույթից միանշանակ պարզ չէ վարչական պատասխանատվության իրավահաջորդությամբ անցման պահը: Մասնավորապես, եթե իրավաբանական անձը կատարում է իրավախախտում և վերակազմակերպվում է, արդյո՞ք վերակազմակերպման պահից իրավահաջորդ իրավաբանական անձը կրում է իրավանախորդի կողմից կատարված վարչական իրավախախտման համար հետագայում վարչական պատասխանատվության ենթարկվելու ռիսկը, թե իրավահաջորդ իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում իրավանախորդ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումից հետո տեղի ունեցած վերակազմակերպման արդյունքում:

Պետք է նշել, որ եթե վարչական պատասխանատվությունն իրավահաջորդությամբ անցնում է վարչական իրավախախտման կատարման պահից հետո վերակազմակերպվելու փաստի ուժով, ապա առաջանում է իրավախախտ իրավաբանական անձին և դրա իրավահաջորդին նույնականացնելու խնդիրը: Մասնավորապես, իրավախախատում կատարելուց հետո իրավաբանական անձի վերակազմակերպան դեպքում իրավախախտումը բացահայտելուց հետո վարչական մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի գտնելու իրավախախտ իրավաբանական անձի իրավահաջորդներին, որը որոշ դեպքերում անհնար կլինի, մասնավորապես, եթե իրավահաջորդ իրավաբանական անձինք ևս դադարեցնեն իրենց գործունեությունը կամ վերակազմակերպվեն:

Բացի այդ, նախագծով սահմանվում են միայն բաժանման ձևով վերակազմակերպվելու դեպքում վարչական պատասխանատվության իրավահաջորդության առանձնահատկությունները, մինչդեռ անհրաժեշտ է վերակազմակերպման յուրաքանչյուր ձևի համար նախատեսել առանձին կարգավորումներ: Խնդիրն այն է, որ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում ևս ըստ էության տեղի է ունենում իրավահաջորդություն, մասնավորապես՝ իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց

առանձնանալու դեպքում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքները և պարտականությունները նրանցից յուրաքանչյուրին են անցնում՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան:

Նախագծով սահմանված կարգավորման դեպքում ստացվում է, որ իրավաբանական անձի՝ առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն առանձնացած իրավաբանական անձը, իսկ այն իրավաբանական անձը, որը կատարել է իրավախախտում և շարունակում է գոյություն ունենալ ենթակա չի լինի վարչական պատասխանատվության:

Բացի այդ, հստակեցման կարիք ունի նաև իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի չափի կամ արժեքի որոշումը: Մասնավորապես, եթե բաժանման դեպքում իրավահաջորդ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հանգամանքը կապվում է նրանց անցած գույքի հետ, ապա անհրաժեշտություն է առաջանում նաև սահմանելու, թե ինչ չափանիշով է որոշվում իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի քանակը կամ չափը՝ գույքի արժեքային արտահայտությամբ, թե գույքի միավորների քանակով:

Վերջին դրույթի հստակեցումը կարևոր է նաև այն առումով, որ ապահովվի կատարված իրավախախտման և կիրառվող պատասխանատվության համաչափությունը: Մասնավորապես, իրավախախտում կատարած իրավաբանական անձի բաժանման դեպքում, օրինակ, նոր ստեղծված իրավաբանական անձանց կարող է անցնել տարբեր քանակի, տարբեր արժեքով գույք, որի դեպքում կառաջնա իրավահաջորդին որոշելու համար գույքի արժեքի կամ քանակի կամ նշանակության որոշման անհրաժեշտությունը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք նախագծով հստակեցնել վարչական պատասխանատվության դեպքում իրավահաջորդությանը վերաբերող դրույթները, մասնավորապես՝ հստակեցնել իրահաջարդության պահը, նախատեսել իրավահաջորդության բոլոր ձևերի վերաբերյալ առանձին կարգավորումներ, հստակեցնել իրավահաջորդ իրավաբանական անձանց անցած գույքի քանակի կամ արժեքի որոշման չափանիշները:

Ուսումնասիրելով օտարերկրյա փորձը՝[1] առաջարկում ենք մանրամասն սահմանել վերակազմակերպման յուրաքանչյուր ձևի դեպքում վարչական պատասխանատվության իրավահաջորդության կարգը, ինչպես նաև բաժանման և առանձնացման դեպքում իրավահաջորդին որոշելու պայմանները[2]:

Քաղաքացիական պատասխանատվության դեպքում ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքով անհրաժեշտ է նախատեսել պատասխանատվության իրավահաջորդության հստակ կարգավորումներ և իրավահաջորդին որոշելու հստակ չափանիշներ: Նշվածը վերաբերում է ոչ միայն մինչև իրավախախտման փաստի հայտնի դառնալը իրավախախտ իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքերին, այլ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորմանը, որի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը:

Նշված դեպքերում ևս պետք է ապահովել իրավահաջորդության որոշման չափանիշների միանշանակություն: Մասնավորապես, անհրաժեշտ է նախատեսել վերակազմակերպման յուրաքանչյուր ձևի դեպքում պատասխանատվության իրավահաջորդության կարգը, ինչպես նաև բաժանման և առանձնացման դեպքերում իրավահաջորդներին որոշելու չափանիշները:

---

[1] Տես՝ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, աղբյուրը՝ http://www.consultant.ru, **А. Банчук** Право об административных нарушениях: опыт стран Западной и Восточной Европы, требования Европейского Суда по правам человека и стандарты Совета Европы, աղբյուրը՝ http://pravo.org.ua/:

[2] Օրինակ՝ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.10-րդ հոդվածի համաձայն իրավախախտ իրավաբանական անձի բաժանման կամ վերջինից այլ իրավաբանական անձի առանձնացման դեպքում պատասխանատվության է ենթակա այն իրավաբանական անձը, որին անցել է գույքի այն զանգվածը կամ այն գործարքներից ծագած իրավունքներն ու պարտականությունները, որոնց հետ կապված տեղի է ունեցել վարչական իրավախախտումը: Տե՛ս ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, 2.10-րդ հոդված, աղբյուրը՝ http://www.consultant.ru/popular/koap/13_2.html#p350:

Պետք է նշել, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության իրավահաջորդության հարցերը որոշակի առումով լուծվում են «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով: Մասնավորապես, նախագծով սահմանվում է, որ փոխանցման ակտը պետք է դրույթներ պարունակի ոչ միայն դրա կազմման պահին առկա պարտավորությունների վերաբերյալ, այլ նաև փոխանցման ակտը կազմելու ամսաթվից հետո վերակազմակերպվող իրավաբանական անձի իրավունքների և պարտավորությունների առաջացման, փոփոխման և դադարման հետ կապված գույքի տեսակի, կազմի, արժեքի հնարավոր փոփոխման դեպքում դրանց իրավահաջորդության որոշման կարգը[1]:

Մեր կարծիքով մինչև կատարված վարչական իրավախախտումը բացահայտելը տեղի ունեցած միացման կամ միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում վարչական պատասխանատվության իրավահաջորդության հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վերակազմակերպման միտումը կամ իրական նպատակը, միացման և միաձուլման դեպքում միացող կազմակերպության և այն կազմակերպության կապը, որին միանում է իրավաբանական անձը և այլ հանգամանքներ, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ իրավաբանական անձը իրավախախտումը կատարելուց հետո միտումնավոր վերակազմակերպվի պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Մյուս կողմից, այն կազմակերպությունը, որին միանում է իրավախախտ իրավաբանական անձը կարող է գործել բարեխղճորեն, իրականացնել միացող ընկերության գործունեության աուդիտ և ոչ մի խախտում չբացահայտելով իրականացնել միացման գործընթացը: Նման դեպքերում, նոր ստեղծված ընկերությունը չպետք է ենթակա լինի վարչական պատասխանատվության միայն այն պատճառով, որ պետությունը չի կարողացել արդյունավետորեն իրականացնել վարչական իրավախախտումների կանխման, բացահայտման և արգելման գործառույթը և ժամանակին չի բացահայտել վարչական ի-

[1] Տես՝ «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, հոդված 15, աղբյուրը՝ http://justice.am/legal/drafts:

բավախախտումը: Բացի այդ, վարչական իրավախախտման դեպքի քննության ժամանակ իրավաբանական անձը չի կարող արդյունավետորեն իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը, որի արդյունքում կխախտվի յուրաքանչյուր անձի (այդ թվում՝ իրավաբանական անձի) ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական մարմինների առջև իր իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքը: Հետևաբար, վերը նշված հանգամանքների հաշվառումը չափազանց կարևոր է պատասխանատվության իրավահաջորդության հարցը որոշելիս:

Ինչ վերաբերում է բաժանման և առանձնացման ձևով վերկազմակերպման դեպքերին, ապա մեր կարծիքով այս պարագայում պատասխանատվությունը բոլոր դեպքերում կարող է իրավահաջորդությամբ անցնել նոր ստեղծված իրավաբանական անձին կամ անձերին, քանի որ չնայած իրավաբանորեն ստեղծվում են նոր ընկերություններ, սակայն դրանք, ըստ էության, նույն ընկերության «մի քանի տարբերակներ» են[1]:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության մասով նույնպես պետք է առաջնորդվել վերը նշված մոդելով, քանի որ պատասխանատվության այս տեսակը ևս դրսևորվում է անձի գույքային իրավունքների սահմանափակմամբ, հետևաբար նման սահմանափակման հիմքերը պետք է լինեն համաչափ, արդարացի և ողջամիտ:

Պատասխանատվության իրավահաջորդության մանրամասն կարգավորումները կնպաստեն պրակտիկայում առաջացող հնարավոր խնդիրների լուծմանը:

Մասնավորապես, այդպիսի խնդիրներ են առաջանում այն դեպքում, երբ իրավաբանական անձը կատարում է վարչական իրավախախտում (թույլ է տալիս գերիշխող դիրքի չարաշահում) և վերակազմակերպվում է (նրանից բաժանվում են երկու ընկերություններ), իսկ իրավախախտ գործողությունը դրսևորվել է որոշակի ապրանքների իրացման գները չհիմնավորված բարձրացնելով կամ շուկայում ապրանքի պակասորդ ստեղծելով, և իրավախախտումը բացահայտվել է վերակազմակերպման գործընթացի ավարտից հետո:

---

[1] Առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքերում պատասխանատվությունը պետք է իրավահաջորդությամբ անցնի այն իրավաբանական անձին, որին վերակազմակերպման արդյունքում անցել կամ մնացել է գույքի առավել մեծ մասը՝ արժեքային արտահայտությամբ:

Մեր կարծիքով նմանատիպ դեպքերում պատասխանատվության իրավահաջորդությունը պետք է որոշել ելնելով հետևյալ չափանիշներից: Առաջին հերթին, պատասխանատվության պետք է ենթարկվի այն իրավաբանական անձը, ում անցել է այն ապրանքներն իրացնելու իրավունքը, որոնց կապակցությամբ տեղի է ունեցել իրավախախտում: Այն դեպքում, երբ այդ ապրանքներն իրացնելու իրավունքը փոխանցվել է բոլոր իրավահաջորդներին, ապա պատասխանատվության պետք է ենթարկվի այն իրավաբանական անձը, ում անցել է գույքի առավել մեծ մասը՝ արժեքային արտահայտությամբ: Այն դեպքում, երբ գույքն իրավահաջորդներին փոխանցվել է համամասնորեն, ապա ֆինանսական պատասխանատվության պետք է ենթարկվեն բոլոր իրավահաջորդները՝ իրենց անցած գույքի արժեքին համապատասխան:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ բավականաչափ կարգավորված չեն կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման արդյունքում պատասխանատվության իրավահաջորդությամբ անցնելու հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, օրենսդրությամբ սահմանված չեն իրավախախտումից հետո, սակայն մինչև դրա բացահայտվելը տեղի ունեցած վերակազմակերպման արդյունքում պատասխանատվության իրավահաջոդության խնդիրները, սահմանված չեն վերակազմակերպման յուրաքանչյուր տեսակի դեպքում պատասխանատվության իրավահաջորդությամբ անցման առանձնահատկությունները, իրավահաջորդին որոշելու հետ կապված հարցերը: Իրավակարգավորման նշված թերությունները առաջացանում են նաև որոշ գործնական խնդիրներ, ինչպես վարչական իրավախախտումների դեպքում պատասխանատու անձին որոշելու և պատասխանատվություն կիրառելու, այնպես էլ քաղաքացիաիրավական հարաբերություններում վնաս պատճառած անձանց իրավահաջորդի նկատմամբ գույքային պատասխանատվություն կիրառելու գործընթացներում: Ուստի՝ նշված խնդիրների լուծումը ձեռք է բերում ոչ միայն զուտ տեսական, այլ նաև գործնական նշանակություն, ինչի մասին են վկայում նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծով սահմանված պատասխանատվության իրավահաջորդության վերաբերյալ կարգավորումները:

Арсен Оганнисян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

ПРАВОПРЕЕМСТВО ГРАЖДАНСКО ПРАВОВОЙ И АДМИНИСТРАТИВНОЙ ОТВЕСТВЕННОСТИ В РЕЗУЛЬТАТЕ РЕОРГАНИЗАЦИИ КОРПОРАТИВНЫХ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Данная статья посвящена исследованию проблем правопреемства гражданско правовой и административной ответственности при реорганизации корпоративный юридических лиц.

В ходе реорганизации по правопреемству переходят не только права и текущие обязанности, но и ответственность, или обязанность нести ответственность за правонарушение предшественников.

В статье выявлены некоторые проблемы правопреемства гражданско правовой и административной ответственности, в том числе вопросы, связанные с определением момента правопреемства и выявлением правопреемника. А так же, представлен процесс определение правопреемников для каждого вида реорганизации и представлены пути решения этих проблем.

Arsen Hovhannisyan
PHD Student of the YSU Chair of Civil Law of YSU

A SUCCESSION OF CIVIL AND ADMINISTRATIVE LIABILITY AS A RESULT OF THE REORGANIZATION OF CORPORATE ENTITIES

This article is sanctified to research of problems of legal continuity of civil legal and administrative responsibility during reorganization of corporate legal entities.

During reorganization not only rights and current duties but also responsibility, or duty to bear responsibility for offence of predecessors, go across on legal continuity.

Some problems of legal continuity of civil legal and administrative responsibility are educed in the article, including the questions related to determination of moment of legal continuity and exposure of legal

successor. And similarly, presented the process of determination of legal successors for every type of reorganization and the ways of decision of these problems.

Բանալի բառեր՝ *իրավահաջորդություն, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, վարչական պատասխանատվություն, վերակազմակերպում, փոխանցման ակտ, բաժանիչ հաշվեկշիռ, միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում:*

Ключевые слова: *правопреемство, гражданско правовое ответственность, административная ответственность, реорганизация, передаточный акт, разделительный баланс, слияние, присоединение, разделение, выделение.*

Key words: *succession, civil liability, administrative liability, reorganization, transfer act, separator balance, merger, accession, separation, allocation.*